

հիմնական գաղափարը» պարզելով, ասում է վերջում: ապագան որչափ եւ նոր իմաստութիւն, նոր հայեացքներ բերէ, յամենայն դէպս «բոլոր այն անանուն մարդիկ, որոնք Հատմակի ուսումնասիրութեան եռանդ շարժելու մեծ ընդունակութեան շնորհիւ շատ քան ստացել են նորանից, որչափ եւ մանր ու մեծ տարբերութիւններ ցոյց տան գիտնական կամ՝ գործնական ասպարհում» երախտագիտութեան զգացմունքով պէտք է միշտ կապուած մնան նորա հետ»:—Յիրաւի մեծ գործիչների գիտնական գործունէութեան զբաւառը նշանակութիւնը հենց այդ է: որ դըրդիչ են հանդիսանում, նոր գաղափարներ եւ սկզբունքներ են տալիս շատ փոքրերի, որոնցով սորա առաջնորդուիլ եւ իւրաքանչիւրն իւր փոքրիկ շրջանում՝ արդիւնք տալ կարող են:—Առարկութիւններ ենք լսում շարունակութե ի՞նչ հարկաւոր են մեզ բարձրագոյն գիտութիւն ստացած մարդիկ, երբ միջակի համար այնչափ շատ կարօտութիւն կայ. ի՞նչ հարկաւոր է եւրոպական համալսարաններ ուղարկել աստուածաբանութիւն ուսանելու, երբ կեանքի մէջ գործնականի այնչափ պահանջ կայ. սակայն միջակ կրթութիւնը ո՞վ կտայ, եթէ բարձրագոյնն ստացած, մարդիկ չլինին. գործնական կեանքի մէջ ինչպէ՞ս պէտք է գաղափարներ իրականան: եթէ այդ գաղափարները զուտ գիտնական ծանապարհով մշակողներ չլինեն: Մեր կեանքի պահանջներն հարկաւ ուրիշ են քան եւրոպականին: մեր կրօնական համոզումներն էլ շատ տարբեր են մի քողոքական աստուածաբանի ունեցածից. քայց այն ինչ որ մենք օտար գիտնականի մօտ սովորում ենք, քայց է անում մեր աչքը մեր ունեցածը տեսնելու եւ գնահատելու. իսկ ինչ որ մենք հետազօտում եւ ուսումնական ծանապարհով մշակում ենք՝ մեր աշակերտները պէտք է իրագործեն կեանքի մէջ: Այդ ծանապարհը շատ երկար է թուում շատերին: քայց ուղիղ եւ ապահով ծանապարհն այդ է. ուրիշ ծանապարհով գնանք, կմոլորուինք: եւ կամ տեղ չենք հասնի, կամ՝ շատ տեւիլի երկար ժամանակ ու աշխատանք գործ կդնենք, մինչեւ որ հասնինք:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՈՒ ԵԿԵՂԵՑԻ.

Գալիցիայի աւստրիահայտակ ուսաց նոր մետրապոլիտ է նշանակուած Ստանիսլաւսկի եպիսկոպոս Իւլիան Կուիլովսկի. այժմեան ակոռանիստըն է Լըվով քաղաքը: Այստեղի ուսաց եկեղեցին միացած լինելով Հռոմի հետ, երկիւղ կայ միշտ, մի գուցէ կաթոլիկական ազդեցութիւնը զօրանայ ի վնաս նորա նախնական աւանդութիւնների: Նոր մետրապոլիտը իւր եկեղեցուն հաւատարիմ մարդ է համարուում եւ տեղական լրագիրները յոյս ունին, որ նա ամուր կպահպանէ միութիւն հաստատելիս պապերի աւանդ արտօնութիւնները:

— С. Пет. Вѣдомости լրագրի թղթակիցը խօսելով ուսաց միջնակարգ դպրոցների կազմակերպութեան մասին՝ խիստ քննադատում է կրօնի դասաւանդութիւնը գիմնադիւններում: Մի աչքի ընկնող պակասութիւն նա այն է համարում, որ Հին Կտակարանի ուսումն այստեղ համեմատաբար շատ աւելի մեծ տեղ է բռնում քան նոր Կտակարանին. աշակերտները սովորում են անունների եւ գէպքերի մի մեծ կուտակութիւն, առանց պարզ գաղափար ստանալու քրիստոնէական վարդապետութեան մասին. մանաւանդ առաքելական գրութիւնները գրեթէ բոլորովին գործ չեն գրուում, եւ հետեւեալն այն է, որ կրթութեան մարդիկ հեթանոս հեղինակներից կարող են շատ քան խօսքի մէջ բերել նոցա լեզուով, իսկ Պօղոս առաքելաւի թղթերն իրենց կեանքում քայց էլ չեն արել. կարծես թէ սոքաւ նոյն իսկ գիտական տեսակէտով վերցրած: պակաս հետաքրքրական են: Մի ուրիշ մեծ թերութիւն է նորա կարծիքով թուանշանները, պատիժն ու պարգեատրութիւնը իբրեւ դնահատութեան միջոց գործադրելու: Հատ կրօնուսոյցներ, բարի, անունն են վաստակում եւ սիրելի դառնում նորանով, որ արժանիքի բարձր թուանշաններ են դնում կամ երբ աշակերտը լայիս է, իսկոյն 1-ը կամ 2-ը 4-ի, 5-ի են փոխում: եւ այդպէս աշակերտները սովորում են կրօնին իբրեւ մի երկրորդական առարկայի վերայ նայել, որ առանց սովորելու էլ կարելի է առաջ գնալ, Որչափ եւ անհրաժեշտ պահանջ է, որ աշակերտները կիւրակէ ու տօն օրերը եկեղեցի գնան՝ պատիժներով ու սպառնալիքներով չպէտք է ստիպել նոցա, այլ համոզել ու սիրելի դարձնել եկեղեցւոյ կարգերը: Այլապէս այն ընտանիքներից, որոնք աչքի չեն ընկնում իրենց բարեպաշտութեամբ, ելնում են միշտ գէպի եկեղեցին անտարբեր երբեմն նոյն իսկ թշնամական տրամագրութիւն ունեցող պատանիներ. այդ տրամագրութիւնն աւելի եւս զօրանում է ուսանողական շրջանում, ե

աճա յառաջ է գալիս բարձրագոյն կրթութիւն ստացած մի դասակարգ, որ ոչինչ գործ չի կամե- նում ունենալ եկեղեցւոյ հետ:

— Մի քանի ամիս առաջ Կիւմուդ տեղի ու- նեցաւ համառուսական հնագիտական մի մեծ ժո- ղով որի բաժանմունքները մէկը նուիրուած էր եկեղեցական հնութիւնների հետազոտութեան, Այս բաժանմունքը 5 նիստ ունեցաւ որտեղ կարգացուե- ցան 17 հրապարակաստութիւններ, բայց եթէ հա- չուի առեւելի նաև միւս բաժանմունքներում ե- կեղ. նիւթերի մասին կարգացուած հրապարակա- աստութիւնները՝ ընդհանուր թիւը կլինի մօտ 40: Դորա բաժանուած էին ըստ տեղի՝ զանազան նա- հանքների վերայ: առաջ կարգացուեցան Կիւմի հնութիւններին վերաբերեալ ուսումնասիրութիւն- ներ, ապա Վոլինի, Պոդոլի, Չերնիգովի և այլ նահանգների՝ վերջում ընդհանուր բնագործութիւն ունեցող խնդիրների մասին: Այս վերջինների թը- ւում էր նաև Պրոֆ. Խախանովի շարադրութիւնը, որի նիւթն էր «Վրոստանի կաթնուղիկոս Անտոնիոս Ա.ի կենսագրութիւնն ու գործունէութիւնը»:

Այս բաժանմունքի միաձայն հաւանութեամբ նախագահ էր ընտրուած Ս. Պետերբուրգի Հոգևոր ձեմարանի ուսուցչապետ Պոկրովսկիյ, որ յայտնի է Ռուսաստանում իր բնական հմտութեամբ հնագիտական հնութիւնների նկատմամբ և տեսուչ է Հոգևոր ձեմարանին կից հնագիտական ինստի- տուտի, նորերս տնտեսեցաւ նորա քսանհինգ- ամեայ գործունէութեան յորելեանը, որին մաս- նակցում էր յարգողների մի ստուար խումբ: Նոցա թուում բարձրաստիճան եկեղեցական և աշխար- հական անձինք, հաստատութիւններ և ինչպէս Պոկրով- սկին միաժամանակ տարիներից ի վեր Հոգևոր ձե- մարանի տեսչի օգնական էր. այժմ Ս. Սինօգի 6 հոկտ. արձակած վճռով նորան փոխարինում է Ս. Պետերբուրգի Հոգևոր դպրանոցի տեսուչ Սեր- գիյ վարդապետը, Վերջին տարիներս պարզ ձգտում է երևում հոգևորական տարրը զօրացնել հոգևոր ձեմարանների վարչութեան մէջ: առաջ տեսչի օգ- նականը գրեթէ ամէն տեղ աշխարհական ուսուցչա- պետներից էր լինում: Պոկրովսկուց յետոյ, որչափ զիտեք, այլևս ոչ մի ձեմարանի վարչութեան մէջ աշխարհական անձ չի մնում: Բացի դրանից, մին- չև անցեալ տարի Մոսկուայի և Մազանի ձեմարան- ների տեսուչը վարդապետ էր. այժմ երկու տեղում ևս եպիսկոպոսական աթոռ է հաստատուել, որով բոլոր ձեմարանները եպիսկոպոս տեսուչ ունին:

— ՍП. ВѢД. լրագրի № 291 Ա. Լիպսկի պատմում է մի նոր աղանդի մասին որ երեք տա- րի է ինչ գոյութիւն ունի և որի հետևողները ա- նուանուում են նորահաւատներ (НОВОВѢРНЫ): Աղան- ղի հայրենիքը Աստրախանի նահանգն է, որի աղ- զարնակութեան մեծագոյն մասը կազմում են Մա-

լոսիսիայից գաղթած եկուորներ: Նոր աղանդի հիմ- նադիրն ու քարոզիչը մի պաշտօնավոր ունեւեր — օֆիցէր էր: Աստիլի Բոչարով անունով, նորա վար- զապետութեան էական մասը կազմում էին նախա- գուշակութիւն աշխարհքի մօտալուստ կործանման և անորոշ երևակայութիւններ նեղան թագաւորու- թեան մասին: Ապաշխարեցէք ձեր մեղքերը — այս- պէս գիմում էին Բոչարովը և իւր աշակերտները ունկնդիրներին: Թէպէտ աղանդաւոր քարոզին քիչ ժամանակից յետոյ բանտարկել են, բայց նորա վարդապետութեան սերմերը լաւ հողի վերայ ըն- կան և շուտով յայտնուեցաւ որ նորա հետևողնե- րը գիշերները ժողովուում և բուռն ոգևորութեամբ աղօթում են: Խուլ կերպով լուրեր են տարածում Յովհաննու Յայտնութիւնից վերցրած գուշակու- թիւնների վերաբերմամբ: Բազմաթիւ գիւղեր զար- մանալի կերպարանք ստացան, գիւղացիները թողնում էին սովորական գործերը, իրենց պարապմունքները, և հազիւ մի ընտանիք գտնուէր ուր այս գուշակութիւն- ներն օրուան խնդիր գարձած չլինէին: ամէն տեղ պատ էին պահում և եկեղեցական երգեր երգում: պատրաս- տուում աշխարհիս վերջը տեսնելու ... 1896 թուի ընդհանուր վիճակագրութիւնը ազդելով ժողովրդի երևակայութեան վերայ աւելի ևս օգնեց այս ա- ղանդաւոր հոսանքի տարածմանը: Ահա ինչ է պատ- մում տեղական միտնարը «Աստրախանի օրթո- դոքս Կիրիլլ» — Մէֆօգիմսկի երայրակցութեան տեղեկագրում: «Այս աշխարհականների Օրթ եկեղե- ցուց յայտնապէս անջատումը տեղի ունեցաւ յունիս ամսում, երբ թէ վաճառում և թէ ծխական եկե- ղեցիներում խոստովանուել թոյլ չտուին և 35 հո- գի նոցանից ձերբակալուեցան: Մինչև այդ ժամա- նակ նրանք աչքի էին ընկնում իրանց չափազանց ջերմեռանդութիւնով: գրանք էին առաջին եկեղեցի եկողները և վերջին հետաջողները: Թողնելով ի- րենց առտնին գործերը նրանք ամբողջ ժամանակը անց էին կացնում աղօթելով, սաղմոս քաղելով և եկեղեցական երգեր երգելով: Սակայն շուտով այս արտաքին կապին, այն ժամանակ արդէն նշմարուում էր բաժանման ոգին: չը լսելով միախոսարների և ծխական քահանաների յորդորանքներին՝ նրանք չէին ուզում թողնել իրանց առանձին ժողովները: — Նոյն տեղեկագրից երևում է, որ նոցա վարդապետու- թեան էութիւնը հետևեալն է: Մօտնում են վեր- ջին օրերը, նեղն արդէն հաստատել է իւր իշխա- նութիւնը և յայտնուել են երկրորդ գալստեան երեք վկաները — Եղիան, Ենովքն ու Յովհաննէս Աստուածարանի, նեղն առաջ թաքնում էր սենա- տում և հրատարակում կործանելի հրովարտակ- ներ, որ խոլերայի ժամանակ վարակուած անասուն- ներին և մարդկանց քարգնէ: նրա վրայ կատարուեց Դանիէլի այն խօսքը (Դ. 24), որով փոքր եղջիւ- րի մասին գուշակել էր. դա է նաև Յայտնութեան

յիշած գաղանք. դա է ոչնչացրել երեք թագաւոր-ներին և ինչպէս ասուում է Յայտնութեան մէջ (13, 15), սպանել 30 հազար քրիստոնեաներին՝ որոնք չէին ուզում իրեն երկրպագութիւն տալ. վերջին ժամանակի բոլոր բարի օրէնքերէն կարգադրութիւնները անմեղներին մոլորեցնելու համար եղած աղետաբեր շողորթութիւններ ու խարերայութիւններ են միայն. Հաստատուելով Պետերբուրգում և Մոսկուայում աշխարհայգ Սոցիալական և Գոմորում, ներք տիրացաւ եկեղեցուն, հրապուրեց եպիսկոպոսներին և քահանաներին ռոմիկներով, շքանշաններով, խաչերով և մեղալներով, այնպէս որ Ռուսաց թագաւորութիւնն իր անհաւատութիւնով նմանեցաւ Հրէական թագաւորութեանը. Եկեղեցում այժմ ամէն բան եւրոպէական է, իսկ շնորհատու Քոդին բացակայում է. եկեղեցում ներկայ վիճակը յիշեցնում է հին ուխտի եկեղեցում վիճակը Քրիստոսի և առաքելների ժամանակ. այն ժամանակ հրէաները ունէին և քահանաներ, և տաճարներ և զոհեր, բայց քահանաներից որ հաւատաց Քրիստոսին, Եւ Աստուած կորստեան մատնեց Նրուսադէմը իւր իմաստուններով և քահանաներով մեկտեղ, իսկ իւր փոքր հօտը ազատեց: Մի թէ նոյնը չի՞ կատարուում և այժմ երկրորդ գալուստից առաջ, Ոչ որ չի տեսնում Աստուծոյ իսկական առաքելներին—Եղիային, Ենոքին և Յովհաննէսին. ծածուկ է նաև Քրիստոսի ապագայ գալուստը, Բայց այն ինչ որ ծածկուած է իմաստուններից և զիտուններից, յայտնի է երեխաներին—նորահաւատներին: Արդ, մի վախենայ, փոքր հօտ (Պուկ. 12, 32). քեզ համար փրկութիւն է պահուած. Արքայական մատնուած քահանաների բազմութեան մէջ մնում են միայն երկու. Ճշմարիտ վկաներ՝ Իոհանն Կրօնշտադսկին և Նիկողայ Դուրովսկին, նրանք են այն երկու խորհրդատուները և երկու ձիթերները, որոնց մասին խօսում է գուշակողը (Յայտնութիւն 11, 4), որոնց մէջ էլ բնակուում է Նիկողայի և Ենոքի ոգին, ինչպէս որ բնակուում էր Յովհաննէս Մկրտչի մէջ. Երրորդ սոցա հաւասար վկան ծերունի Անդրէյ Զերշան է. Սրանք խոնարհութեամբ ծածկում են իրենց բարձր կոչումը, հրաժարուում են նրանից, բայց զրանց մատուցած պաշտամունքները և եկեղ. խորհուրդները չի են շնորհօք և ճշմարտութեամբ. Այժմ այլևս եկեղ. խորհուրդների կարիք չկայ. Քրիստոսի մատաւուտ գալուստեան պատճառով ճշմարիտ քրիստոնեաները չպէտք է ոչ պատկուին, ոչ որդի ունենան, այլ պահպանում և ապաշխարութեամբ պիտի պատրաստուին Քրիստոսի հետ միանալու. —Այժմ նորահաւատների ազօթաւորները և ընդարձակ այրերը փակուած են, իսկ աղանդի ամենագործունեայ ներկայացուցիչները աղափոխուած են Պրիվիլեյան երկրորդ:

Ամէն տարի օգոստոս ամսին Գերմանիայի կաթողիկոսները մի մեծ համախմբում են ունենում, ուր արծարծուում են կաթողիկոսութեան առաջնորդող սկզբունքները և վճիռներ են տրուում ի պաշտպանութիւն նորա շահերի. Այս տարի այդպիսի համախմբումն տեղի ունեցաւ օգ 27—31-ին Նէյսսէ քաղաքում. կարգինալ Առաքի և բաղմութիւն մեծանուն աշնուականների ու հրապարակային գործիչների մասնակցութեամբ. Այս համախմբումն ենր առհասարակ շատ շքեղ են լինում, շատ լաւ կարգաւորուած, և տղաւորութիւն են գործում հանգիստականների կամ շրջապատող հասարակութեան վերայ նորանով, որ այնտեղ արտասանուած բաղմատեսակ և զեղեցիկ ճառերի մէջ նկատելի է գաղափարի միութիւն, սեփական ոյժի գիտակցութիւն, բայց որովհետեւ բոլոր այդ ճառերը շափի ու ձեւ տակ դրած են, նախապէս որոշած շրջանակից դուրս չեն ելնում, ուստի չեն էլ ծառայում նոր խնդիրների պարզարանութեան, միշտ գրեթէ միևնոյն բանն են կրկնում՝ նորանոր ձևերի ներքոյ, Այդպէս վերջին ժողովում կազմած չորս որոշումների մէջ առաջին տեղ է բռնում կրկին պապի գերիշխանութեան կամ պապական աթոռի քաղաքական անկախութեան հարցը, որով կարող կլինէր նա խաղաղութեան պաշտպան հանգիստեալ աշխարհում և միջնորդ կռուող ազգութիւնների մէջ, Երկրորդ որոշմամբ մի մեծ բարիք է նկատուում մարդկութեան համար պապի մայիս 25-ին արձակած շրջաբերականը, որով ամբողջ մարդկային ազգը նուիրաբերում է Յիսուսի «Աստուածային սրտին» * և կաթողիկոսներին հրաւիրում օգնել Յիսուս Քրիստոսի (իմա Փոխանորդի) արքայական իշխանութիւնն ամենուրեք հաստատելու. Երրորդ որոշումը վերաբերում է համայնական խնդրին, պահանջ է արուում որչափ կարելի է շատ բանութեամբ ընկերութիւններ հիմնել կաթողիկ հոգւով, եւ լրջօրէն ուսումնասիրել այդ խնդիրը, նըպաստել նորա ուղիղ ու բաղմակողմանի ըմբռնման կաթողիկական շրջաններում, Զորրորդ՝ ուշադրութեան է առնուում ժամանակակից գրականութիւնը, որի արտադրութիւնները շատ անգամ բարոյապէս վատ ազդեցութիւն են ունենում մատաղ սերունդի վերայ. կաթողիկոսների համար պարտաւորեցուցիչ է համարուում բաւականաւալ այն վեպերով, որոնք կաթողիկական առողջ հոգութեանը դրութիւն են, և նպաստել այդ տեսակ գրականութեան ճոխանալուն. —Աչքի էր ընկնում այս ան-

* Եզուիսների հնարած պաշտամունքն որոնք այդպիսով իրաւունքներն ամենալինս գաղափար՝ խալի վերայ յայտնուած ամենագոն սեռն անցաւ նիւրական եւ լեւոյր և նախապաշարունակն առաւկայ են դարձնում:

գամ մանաւանդ այն հանգամանքը, որ ժողովականներն ամէն կերպ խոյս են տալիս կաթողիկոսական թոյլ կողմեր կամ արատներ քննութեան խորքը զարձնելուց, օրինակ ո՛չ մի խօսք չեղաւ ազգով լեհ կաթողիկոսների ժողովից բացակայելու մասին: Ընայելով որ համախմբումից առաջ ամիսներով վիճել և լրագրներում քննադատել էին այդ հարցը իրողութիւնն այն է, որ գերմանացի կաթողիկոսները շատ միջոցներ են գործ գնում և զիջումներ են անում նոցա զբաւելու համար: Բայց նոքա ազգային տեսակէտով հեռու են մնում: և այդպիսով չի արդարանում կաթողիկոսների առարկութիւնը, թէ նոցա համախմբումները զուտ կրօնական—եկեղեցական նպատակ ունին աչքի առաջ:

— Բողոքական գերմանացիք խուլ կամ յայտնի կերպով տրտմութեամբ են, որ մինչ Բաւարական թագաւորութիւնը ամէն կերպ պաշտպան է հանդիսանում կաթողիկոսական և միջոց է տալիս բոլոր գերմ. կաթողիկոսներին իւր հովանու ներքոյ համախմբուելու և իրենց զօրեղ զգալու: պրուսական թագաւորութիւնն ընդհակառակը, որ դարերէ ի վեր կոչուած է եղել բողոքականութեան զօշը բարձր պահելու՝ ո՛չ միայն անուշադիր է թողնում նորա շահերը, այլ նոյն իսկ երբեմն ի վնաս նորա անխտում է հաճոյ լինել և օգնել կաթողիկոսներին: Բաւարական իշխանութիւնն ի միջի այլոց զօրեղ ընդդիմութիւն է ցոյց տալիս Աւստրիայում սկըտուած հակահռոմէական հոսանքին և այն ո՛չ թէ եկեղեցական, այլ քաղաքական նպատակով որպէս զիշտարանայ կաթողիկոսական ոյժը կազմող պետութիւններից մէկը և հարկաւոր դէպքում իւր գաղտնիքը լինի:—Այդ հոսանքը դեռ շարունակուած է այնուամենայնիւ և թէպէտ դաւանափոխութիւնների թիւը շատ մեծ չէ, բայց միջոց է տալիս նորանոր աւետարանական համայնքների կազմուելու և Աւստրիոյ հպատակ բողոքական եկեղեցւոյ զօրանալուն, որ ապագայում շատ նշանակութիւն կարող է ունենալ: Ցարուայ սկզբից մինչև յունիսի վերջը բողոքականութիւն ընդունել են Աւստրոհունգարիայում ընդամենը 3449 հոգի: Ինչ հանած կաթողիկոսութիւն ընդունողներին 427 հոգի: 3022 բողոքականներ աւելացել են: Բացի այդ՝ շարժումն սկսուելուց ի վեր հին կաթողիկոսների հետ միացել են 2106 կաթողիկոսներ:

— Սպանիայում հոգևորականութիւնը երկու բանակի է բաժանուել. մէկը հաւատարմ է մնում իրող արքայական տանը, միւսը թշնամական գիրք է բռնել և յայտնի կերպով համակրութիւն է ցոյց տալիս Գոն Կարլոսի կուսակցութեան: Տոլեդոյի եպիսկոպոս կարգինալ Սանչին մի գիրք էր գրել, որով յորդորում էր յարգել այժմեան 1876 թ.-ից սահմանուած պետական կարգերը: Սիվիլիոյ եպիսկոպոս Սպինոլան հրապարակաւ բողոքովին հակառակ

մտքեր յայտնեց, պապը Սանչիի կողմը բռնեց և մօտերս նորան ուղղած մի կոնգակով քաջալերում է նորան և խստիւ դատապարտում հակափարչականներին: Այս կոնգակը հրատարակուեցաւ: Եւ Կաթողիկական համաժողովի բացումից անմիջապէս առաջ, որպէս զի այդտեղ ժողովուած եկեղեցւոյ ներկայացուցիչների վերայ որոշ ազդեցութիւն ունենայ, բայց ժողովականները, թուով 3000, առաջին օրուանից իսկ հակառակ տրամադրութիւն ցոյց տուին, և մինչ Սիվիլիոյ եպիսկոպոսի ժողովին մասնակցելու յայտարարութիւնը ցնծագին բացականչութիւններով ընդունուեցաւ, պապի պաշտպանած եպիսկոպոսի նամակին պատասխանեցին սուլոցներով: Այսպիսով պապի խաղաղասէր ազդարարութիւնները բողոքովին անուշադիր մնացին և խօսուած ճառերի մէջ հանդէս եկաւ սպանական մոլեռանդութիւնը իւր ծայրահեղ պահանջներով՝ մերժել աղատամական համբերատար օրէնքները, կրօնը փտանգից աղատել, եւ համաժողովը, որի նպատակն է երկրի բոլոր կաթողիկոսներին միմեանց մօտեցնել ու միացնել՝ հակապետական բնաւորութիւն ստացաւ և նոր պառակտումների, մի քանի նահանգներում մինչև իսկ խռովութեան և արիւհեղութեան պատճառ եղաւ: հարկ զգացուեց կառավարութեան կողմից ճշշող միջոցներ գործ գնել, պապի նուիրակն ևս եպիսկոպոսներին իւր մօտ ժողովեց ու սպառնալիքներով միայն կարողացաւ համոզել, որ ստորագրեն խնամակալուհի—թագուհուն մատուցանելիք հպատակութեան սովորական յայտագիրը, Զանազան կուսակցութիւններ, կրօնը քաղաքական զէնք դարձրած՝ սպառնում են ուրեմն տակն ու վրայ անել կրկին այս խեղճ երկիրը:

— Պրանսիայում խուլ կոխ է մղուում եկեղեցւոյ և կառավարութեան մէջ, վերջինս առիթ չէ փախցնում եկեղեցւոյ նշանակութիւնը ձգելու: Իւրաքանչիւր տարի պետական ծախքերի նախահաշիւը կազմելիս վէճեր են լինում, եթէ ոչ բոլորովին ոշնացնելու, գոնէ զեղչելու եկեղեցւոյ վերայ եղած ծախքերը: Այս անգամ հարց եղաւ յատկապէս Աւստրիական դեսպանատունը վերացնելու մասին և յանձնաժողովը ձայների մեծամասնութեամբ վճռեց ջնջել նախահաշուից այդ դեսպանատան ծախքը: Դժուար ի հարկ է ազգային ժողովը հաստատէ այդ վճիռը, որովհետև պէտք կլինէր ամէն յարաբերութիւն խզել պապական աթոռի հետ, որ կարելի չէ, այնուամենայնիւ իրողութիւնն ըստ ինքեան հետաքրքրական է, իբրև ապացոյց բարձր, կառավարչական դասի դէպի եկեղեցին ունեցած թշնամական յարաբերութեան:

— Սակայն միայն բարձր դասի մէջ չէ երևում այդպիսի թշնամական յարաբերութիւն: Օգոստոսի վերջերին Փարիզում 3000 հոգուց բաղկացած մի ամբօխ Վորշեն եղուիաները, կորշեն

անպիտանները՝ ազադակելով օրը ցերեկով ներս խուժեց ս. Յովսէփի եկեղեցին՝ որտեղ հենց նոր ժամասացութիւնը վերջացել էր ժողովուրդը ցրուել և միայն քահանան ու ժամկոչն էին մնացել, և անօրինակ անկարգութիւններ գործեց. եկեղեցուց դուրս տարուեցան սրբազան անօթներ, պատկերներ, հանդերձներ, դրքեր, որ կոտորեւելով պատռտեւելով ու ոտքի տակ տալով անխնայանական խռովարարները փողոցում գիզեցին, կրակ տուին և զուարճանում էին զգուշի երգեր երգելով, մինչև որ բաւականաչափ ոտիկաններ ժողովուրդը ցրուեցին նոցա. Ուշադրութեան արժանի հանգամանքն այն է, որ այս անկարգութեան ձերբակալուած պարագլուխները մեծ մասամբ 14—20 տարեկան տղայք են՝ արդի ֆրանսիական դպրոցի պետուհները, որ կրօնի դասատուութիւնը իւր առարկաների ցանկից զեղչել է. — Անկրօնութեան հետ զարհուրելի չափերով զարգանում է նաև անբարոյականութիւնը. գեղարուեստ և գրականութիւն կարծես այլևս ամօթ չեն ծանաչում. ամենատգեղ տեսարաններ հրապարակաւ ի յշոյց են տրուում և նոցանով կրթուում է մատաղ սերունդը. քաղաքակիրթ աշխարհի կենտրոնից տարածուում է այս «կրթական ողին» ամէն տեղ, և դժուար է դուշակել թէ դեռ ինչ պտուղներ պէտք է բերէ:

— Այս երեւոյթները հանդէպ հետաքրքրական է մի հանգէս, որ տեղի ունեցաւ հարաւային Գըրանսիայում. Վալէնտում՝ օգ. 28 և 29-ին. անցեալ դարու վերջին պապի՝ Պիոս Զ.-ի մահուան հարիւրամեակն էր այդ, որի առթիւ փառաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ ըստմանի հոգևորականների մասնակցութեամբ. Ինչպէս յայտնի է Պիոս Զ. մեռաւ իբրև արքայական Վալէնտում կաթողիկէ եկեղեցւոյ համար ամենատխուր մի ժամանակի Հոռոմում յեղափոխութիւն էր տեղի ունեցել պապականութիւնը կործանուած էին հրատարակել և Տիբերի կամուրջի վերայ ազատութեան արձան կանգնեցրել, որ ներկայացնում էր մի կին՝ պապական եռաստիճան թաղը ոտքի տակը. Փարիզում եակորինները պապական իշխանութիւնը և նորա հետ մէկտեղ եկեղեցին թաղած համարելով՝ հոգեհաշներ էին վայելում: — Անցաւ մի դար, և ինչ վիճակի մէջ է այսօր Պիոս Զ.-ի թողած եկեղեցին: Լեոն Թ. ևս իրեն արքայական ու բանտարկեալ է համարում: Եւ որչափ իշխանութիւն ունի այդ բանտարկեալը ի սփիւռս աշխարհի ցրուած կաթողիկէների հոգիների վերայ, և նոցա շնորհիւ՝ ամբողջ աշխարհում: Արդեօք ինչ կլինի կրկին մի դար յետոյ կաթողիկէ եկեղեցւոյ վիճակը:

ԲՈՂՈՒԲԱԿԱՆ ԵԿԵՂ.ԵՑԻՆԵՐ.

Գերմանիա:

Աշունը Գերմանիայում եկեղեցական մեծ ժողովների եղանակն է. Այս տարի ևս մի քանի այդպիսի ժողովներ գումարուեցան ի թիւս որոց Ընդհանուր աւետարանական միսիոնի համագումարումը սկստ. 19—20-ին Մայնինգէնում: Հասնող տարրերական տեղեկութիւններ է պարունակում այստեղ կարգացուած ճապոնիայից նոր վերադարձող զր. Քրիստիւր միսիոնարի բանախօսութիւնը. Անդանի գոյներով նա նկարագրում է՝ նախ հնի և նորի, արեւելեանի ու արեւմտեանի այն տարօրինակ խառնուրդը, որ ճապոնական քաղաքակրթութիւնը ներկայացնում է այժմ. ճապոնացիք Եւրոպայից մեծ մասամբ քաղաքակրթութեան արտաքին տեսնելիքն են կողմն են առել, որով օտարները շատում են և նեյթին կեանքի կրթութեան արուեստի, լաճառականութեան մէջ եղած մեծամեծ թեւումիւնները չեն տեսնում: Նոցա պաշտած երկու կրօնները՝ հին Ժինտոյական և նոր Բուդդայական, այնչափ շաղուել են միմեանց հետ, որ դժուար է այլ ևս մէկի հետեւողներին տարբերել միւսներից: Դոցա հետ միասին Անֆուկիոսի ուսումն ևս ունի իւր կողմնակիցները. Այն տարածուած կարծիքը թէ Բուդդայական կրօնն առաջինն է իւր պաշտողների ըստմութեամբ, հիմնովին սխալ է. 400 միլիոն չինացիք և ճապոնացիք բուդդայական չեն, ինչպէս սովորաբար ընդունում են չինական կրօնը, որ աւելի ճիշդ կլինէր կոնֆուցիան կրօն անուանել, 300 միլիոն հետեւողներ ունի, և ուրեմն երկրորդ տեղն է բռնում քրիստոնէութիւնից յետոյ, որի հետեւողներն են 450—500 միլիոն. ապա զաւլիս է հինդուների կրօնը 200—250 միլիոն, և վերջը բուդդայական և մահմեդական կրօնները, իւրաքանչիւրը 100—200 միլիոն հետեւողներով: * — Քրիստոնէութիւնը մի առժամանակ մեծ յաջողութիւն ունենալուց յետոյ ճապոնիայում՝ վերջին տարիներս զրեթէ այլևս յառաջ չի գնում. Պատճառն այն է, որ ճապոնացիք առժամանակ խիստ մեծ եռանդով և առանց խտրութեան եւրոպական քաղա-

* Նորագոյն աշխարհագրական հաշուով երկրագնդի վերայ ապրում են 1534 միլիոն մարդիկ, 1100 կրօնների յաճանուած. զոցածից 490 միլիոն իսլամական են. ըստ զաւտուութեան 221 միլիոն կաթոլիկ, 165 միլիոն բողոքական, 94 միլիոն օրթոդոքս և 10 միլիոն միւս փոքր եկեղեցիների և աղանդների պատկանողներ: Ո՛ր իսլամականներն են. 7—8 միլիոն հեռայ. 178 միլիոն մահմեդական. 147 միլիոն քաղմալական. 510 միլիոն բողոքական. մնացած 200 միլիոնը զանազան հերանոսական կրօնների հետեւող: Անհրաժեշտ է մի ժողովուրդ չէ գրեմուած՝ ամենափայլեկի ցիզերի մէջ անգամ:

քակրթութեան արդիւնքները իւրացնելուց յետոյ, յանկարծ կանգ առան և սկսեցին կասկածով ու արհամարհանքով վերաբերուել զէպի ամէն օտար բան։ Առհասարակ նոքա աչքի են ընկնում իրենց չափազանց ինքնահաւան կեղծ ազգասիրութեամբ, այդ մոլութիւնն այնքան ընդհանուր է, որ նոյն իսկ քրիստոնէութիւն ընդունած ճապոնացիք մի քանի տարի առաջ սկսան երեւակայել, թէ ճշմարիտ քրիստոնէութիւնը իրենք են միայն հասկացել և իրենցից նոր լոյս պէտք է տարածուի քրիստոնէական աշխարհում։ Ուստի այս ժողովուրդի մէջ քրիստոնէութիւն քարոզողները մեծ զժաւարու-թեանց են հանդիպում։ Բայց միևնոյն ժամանակ եթէ շրջահայեաց լինեն և իմանան նոցա ազգային յատկութիւնները գնահատել, շատ բան կարելի էր յօգուտ քրիստոնէութեան յեղաշրջել։ Ճապոնացիք խիստ չափաւոր է, գոհ իւր վիճակից և միշտ զուարթ, քաղաքավարի յետին ծայր, բարկութիւն և այլ կրքեր զսպելու խիստ մեծ ունակութեամբ օժտուած։ սիրալիր պատրաստակամ երախտագէտ ամենափոքր բարիքի համար, քանակէր, համբերող, ճակատագրին հնազանդ, և սակայն չափազանց շարժուն և հետաքրքիր նոր բան սովորելու։ իսկ դոքա յատկութիւններ են, որոնք պատրաստի հոգ են ներկայացնում քրիստոնէական բարոյականութեան և հետեւաբար քրիստ. աշխարհայեցողութեան համար։ Մի մեծ խնդիր էր այն է, որ կրթութեան կամ աւելի ուղիղ՝ կրթակիր զասը համոզուած է, թէ ինչպէս ճապոնիայում կրօնները ամբողջի համար են, այնպէս և Եւրոպայում քրիստոնէութիւնը հասարակ ժողովրդի համար է։ երկատարադ սերունդի զընտը լի է եւրոպական ազատամտութիւնից փոխ առած զազափարներով, և մեծ կարիք կայ համոզելու նորան, որ ամենաբարձր քաղաքակրթութիւնը և նորա ամէնից մեծ ներկայացուցիչները քրիստոնէական կրօնի վսեմութիւնը ձանաչում են և նորա առաջ խոնարհում։ Բացի այդ՝ պէտք է քարոզել զուտ քրիստոնէութիւն, իւր նախական ձևի մէջ, և ոչ այս կամ այն դասնութեամբ, այս կամ այն կերպարանքով, որնա ընդունել և այլևայլ եկեղեցիներում։ Այդ սկզբունքով է առաջնորդուել ատենախօսը իւր ընկերների հետ և հետևաբար շատ միութարական է եղել։

— Սեպտ. 19—21-ին գումարուեցաւ «Գուստավ—Ադոլֆ» ընկերութեան 52-րդ ընդհանուր ժողովը, Ետենադպիր պատուոյ դ. Լարտուեզի ներկայացրած հաշուից երևում է, որ ընկերութիւնը վերջին տարին ևս յառաջադիմել, մեծացել է. նորա ճիւղերը, որ 1875 էին՝ դարձել են 1891. կանանց ընկերութիւնները 563-ից դարձել են 572. բայց տարեկան եկամուտը, որ անցեալում 2,507,549 մարկ էր, եղել է 2,466,920 մարկ. այդ պատճառով նորանով է բացատրուում, որ անցեալ թուա-

կանին առանձնապէս խոշոր նուիրատուութիւններ են եղել, Ընկերութեան ծախքով շինուած 35 եկեղեցիներ և աղօթատներ օրհնուել են և նոր 29-ի շինութիւնը սկսուել։ Ընկերութիւնը նաև 13 տներ պատուոյնի համար և 8-ը նոր սկսուել, 8 ուսումնարաններ պատրաստուել են և 2-ի շինութիւնը սկսուել է, Բայց օգնութիւն խնդրող համայնքների կարիքն այնչափ մեծ է, որ ընկերութիւնը հազիւ 10-րդ մասը լրացնել կարող է։— Ժողովի ուշադրութեան զխաւոր խնդիրն էր Եւստրիոյ հակահոռ-մէական շարժումը, գէպի որը ընկերութիւնը շատ զգոյշ ընթացք է բռնել, այնուամենայնիւ զգալի օգնութիւն է ցոյց տուել դաւանակիցներին՝ թէ կենտրոնից և թէ մասնաճիւղերի հանգանակած մասնաւոր նպաստներով։

Նոյն հարցը մեծ տեղ էր բռնում նաև «Եւստարանական միութեան» 12-րդ ընդհանուր ժողովի մէջ, որ տեղի ունեցաւ 9—12 հոկտեմբերի Նիւրնբերգ քաղաքում։ Այդ քաղաքը ընտրուած էր յատկապէս նորա համար, որ Բաւարիայում ամենանշանաւոր քաղաքն է բողոքական բնակիչների մեծամասնութեամբ, և կաթոլիկ եկեղեցին մեծ քանք է գործ դնում կաթոլիկութիւնը նորա մէջ զօրացնելու։ Եւստարանական ոգին զարթոնել դաւանակիցների մէջ և Եւստրիայում սկսուած Եւստարանական շարժման հակառակորդ Բաւարիայում այդ շարժմանը ոյժ տալու մասին խորհրդածել՝ ժողովի կողմնակի նպատակն էր, որին և հասաւ յաջողութեամբ։

— 4-8 հոկտեմբերի Բարմեն քաղաքում մօտ 1000 հոգու ներկայութեամբ կայացաւ Ժ.Ե. Եւստարանական դպրոցական համաժողովը, Խորհրդադատութեան զխաւոր նիւթերն էին. թէ որչափ և ինչ եղանակով մասնակցութիւն պէտք է ունենայ հոգևորականութիւնը դպրոցական գործի մէջ. թէ Լին Ստակարանի քննադատութեան արդիւնքը ինչ չափով կարելի է գործադրել միջնակարգ դպրոցներում։ Թէ ինչ է ընտանիքի կրթական դերը. թէ ինչպէս պէտք է վերաբերուել դպրոցում դաւանական անխորականութիւն մտցընելու պահանջին։ Աերջին կէտի նկատմամբ ժողովը միաձայն ընդունեց հետևեալ որոշումը. «Ժ.Ե. դպրոցական համաժողովը այն համոզումն է յայտնում, որ քերմանական հասարակական ամէն տեսակ կրթարանները՝ տարրական և աւելի բարձր դպրոցները, թէ միայն սկզբից իրրե հրեական համայնքի սեփականութիւն չեն բացուած, կամ ինչպէս Բադենում օրէնքով դաւանական անխորականութիւն իրրե սկզբունք ընդունած՝ դրական և բնական իրաւունքով իրրե ֆրիստհեական դպրոցներ պէտք է նկատուին և գերմանական ազգի ու քրիստոնէական եկեղեցւոյ զարգացման համաձայն դաւանական բնաւորութիւն պէտք է ունենան, այսին-

քըն նոյն հաւատի և խղճի տէր ուսուցչական խումբ։ Այլ և աշակերտների փոքրամասնութիւն ունեցող դաւանութեան իւրաւունքը նորանով ըստ արժանւոյն պահուած չի լինի։ որ խառն ուսուցչական խումբ կազմուի այլ որ այդ դաւանութեան համար յատկապէս մի հմուտ ուսուցիչ նշանակուի։ Հրեայ ուսուցիչները բացի կրօնուսուցչներից, որոնք և միտքն հրեական կրօն պէտք է ուսուցանեն՝ ամէն տեսակ գերմանական հասարակական կրթարաններում, տարրական և թէ աւելի բարձր դպրոցներում, չպէտք է լինին։

— Հոկտ. 8—10-ին տեղի ունեցաւ Գորտմունդում Գերմանական բարոյականութեան ընկերութիւնների ԺԱ. ընդհանուր խորհուրդը։ Բուն ժողովին կից այստեղ զանազան մասնաւոր համախորհուրդներ ևս եղան, որոնց գրեթէ բոլորի բանախօսութեան նիւթը օրուայ մեծ չարիքն էր՝ ամբողջ քաղաքակրթուած աշխարհի կեանքը թուաւորող անառակութիւնը։ Խորհուրդի նախագահ Լից. Վերէր չարիքի մեծութիւնը նկարագրելով, որի համար բաւական էր յիշել, թէ միայն Գերմանիայում 200,000 անառակութիւնն իբրեւ արհեստ գործ գնող կանայք կան։—այս ընկերութիւնների և զրաի ընդհանուր մարդասիրական գաղափարներով եղած շարժումների մէջ այն տարբերութիւնը մատնացոյց արաւ որ սորա չեն աշխատում միայն իրերի դրութիւնը փոխելով անառակութեան առաջն առնելու։ այլ նաև առանձին անհատներ կորուստից փրկելու։ Նորա հետամուտ են անկեալի խիղճը զարթնցնելու, իրենց «ազնիւ» կրքերին յագուրդ տուող պատուաւոր մարդոց երեսից կեղծաւորութեան քողը պատառելու։ Նոքա այժմեան կրթութեան մէջ տեսնում են անբարոյականութեան շատ վնասակար արմատներ և ձգտում են այդտեղ բարեփոխութիւն մտցնել։ Նոցա սկզբունքներից մէկն է. նոյն բարոյականութեան պահանջը մարդու և կնոջ համար։ Նոյն բարոյական մաքառումը կրկուսի կողմից։—Ժողովն ի միջի այլոց հետեւալ որոշումն ընդունեց. «Բրիտանական բարոյականութեան տեսակէտով պահանջել ինչպէս բոլոր լուրջ ազգակիցներից, այնպէս և պետութիւնից, որ ամենայն եռանդով կռուեն հրապարակային անբարոյականութեան դէմ երբ հարկաւոր է նաև պատիժներ գործ գնելով և շեշտել յատկապէս, որ անառակութիւնը պաշտօնապէս ծանաչելն ու կարգի տակ գնելը իբրեւ վնասակար և անօգուտ իսպառ խոտելի պէտք է համարուի։ Ժողովը ընդունում է Բրիտանիայում սեռական անարարի դէմ կազմուած միջազգային խորհուրդի որոշումները։ կառավարութեանց ուշադրութիւնը դարձնել հետեւալ պարտականութեանց վերայ. ա) Անբարոյական անարարի հետեւանքները պարզել ժողովրդին։ մանաւանդ երիտասարդ սերունդին։ բ) Բոլոր պե-

տութիւնների մէջ նոյն հիմունքներով հաշիւ կազմել այդ անարարի համար։ գ) Անշտիւ հասնելն ոչ մի դէպքում, ոչ մի ցուցակի մէջ չմտցնել։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգլիկան եկեղեցւոյ այս տարուայ համաժողովը գումարուեցաւ Լոնդոնում հոկտ. 10—13-ին, Համաժողովից առաջ «Եկեղեցական միութիւնը» մի մեծ և խիստ բազմամարդ միակեց կազմեց, որի նպատակն էր բողոքել արքեպիսկոպոսների բուրյառ ձգելու նկատմամբ տուած վճռի դէմ և ծէսերի պահանջը շեշտել։ Միտինգի նախագահ լորդ Հալիֆաքս իր պերճարան ճառով ցոյց տուաւ, թէ ինչպէս է Անգլիայում շարժում սկսուել ի նպատակ ծէսերի և ինչպէս զօրացել, թէ որքան յիշաւ այդ շարժումը զօրեղ է այժմ, երևում է նորանից, որ ծխականութիւնը զօրացնելու նպատակով կազմուած «Եկեղեցական միութիւնը» կարճ միջոցում 38,380 անդամներ է ձեռք բերել՝ 4,380 հոգեւորական և 34,020 աշխարհական։

— Համաժողովի մէջ ևս ուր խօսեց կրկին Լորդ Հալիֆաքս, այս խնդիրը բուն վիճարանութեանց առարկայ եղաւ։ առանց մի եզրակացութեան յանգելու։ Նշանաւոր էր այս համաժողովի նախագահ Լոնդոնի եպիսկոպոսի ճառը, որ ամենագիտուն անգլիացի եկեղեցականներից մէկն է համարուում և որ այսպէս որոշեց իւր գաղափարը անգլիկան եկեղեցւոյ մասին։ «Ես նայում եմ նորա վերայ իբրեւ մի եկեղեցւոյ, որ մի որոշ տաճարութեան մէջ չէ սահմանափակուած, բայց և տիեզերականութեան միտումներ չունի» այն պատճառաւ, որ մի առանձին հայրենիք չունի, այլ իւր արմատները անգլիական ազգի սրտի և հոգու մէջ են։ Ես չեմ քաշուում ասելու, որ աստուածային հաստատութեան համար աւելի յարմար հայրենիք չեմ գտնում ամբողջ աշխարհում։ Այս հայրենիքից արդէն կարող է նա անվհեր կերպով հրապարակ գալ և աշխարհի զիմաց ելնել... Մի եկեղեցի ազատ մարդոց համար, որոնց նաև ծանաչողութեան և երկիւղածութիւն է ապիս իւր դաստիարակութեամբ։ մի եկեղեցի, որ հոգին արտաքին ձեւից ազատում է, որովհետեւ կենդանի յարաբերութեան մէջ է իւր որդւոց հետ և սորա իրենց մօրը սիրում են և ազատ կերպով յայտնում են նորան իրենց կարծիքը... Մի եկեղեցի, որ ոչ մի բանից երկիւղ չունի և նոր գրգռումների ուրախութեամբ տեղի է ապիս. կենդանի և զգուշաւոր կերպով քննում է ամէն ինչ և պատրաստ է միշտ հաշիւ տալու իւր սկզբունքների և նոցա գործադրութեան մասին... Նորա արմատները անցնալի մէջ են ամբացած, ուստի զօրեղ է ներկայումս և զուարթ յուսով լի ազգային համար։ Արդհետեւ Բրիտանիայի եկեղեցւոյ մեծ կոչումն է ապագան կազմել և Աստուծոյ

արքայութեան գալուստը արագացնելու — Հետաքրքրական են այն տեղեկութիւնները որ Լոնդոնի եկեղեցական գրութեան մասին այս ժողովում տրուեցան. Այդ աշխարհաքաղաքը իւր 4 միլիոն բնակիչներով միակերպ է բաժանուած եկեղեցիների վերայ. մինչդեռ Սիտի քաղաքարտինը (կենտրոնում) 57 եկեղեցի ունի որով 400 հոգուն մի եկեղեցի է բնկուում արեւմտեան կողմում եկեղեցիներ կան որ 10—30 հազար հոգի ծուխ ունին, 4000 հոգի միջին թուով իւրաքանչիւր հոգեւորականի համար. Պէտք է սակայն ի նկատի ունենալ որ առաջ աւելի վատ է եղել. վերջին 2 տասնեակ տարիներում, միայն հար. Լոնդոնում 80 նոր եկեղեցիներ են շինուել:

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ազգիս Վեհ. Հայրապետի ս. Օծման վեցերորդ տարեդարձը տօնուեցաւ այս տարի եւս սկստ. 26-ին պատշաճ հանդիսաւորութեամբ: Առաւօտեան ժամերգութեան ներկայ էր Նորին Վեհափառութիւնը. վերջում Հայրապետական մատթանք կատարուեցաւ եւ միաբանութիւնն ու ժեմարանի աշակերտները համբուրեցին Սրբազնապետին Տօնատիրոջ աջը: Պատարադիչ եղաւ Բնասարարիոյ թեմի նոր առաջնորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոս: Ապա տեղի ունեցաւ մի փոքրիկ զրական հանդէս Գեորգեան ժեմարանի հանդիսարանում ուր ներկայ էր Ս Էջմիածնի միաբանութիւնը. հրաւիրուած էին նաեւ սակաւաթիւ հիւրեր որոնք հեռաւոր քաղաքներից եկել էին տօնի տոթիւ: Հանդէսը սկսաւ շարականով. Ա. լսարանի մի ուսանող կարգաց մի բաւական բնդարձակ տեսութիւն Վեհ. Հայրապետի Պապիկ եւ Թոմնիկ աշխատութեան վերայ. Տեսուչ Տ. Կարապետ վարդապետ մի ընդհանուր եւ համառօտ ակնարկ ձգեց հայոց հայրապետութեան պատմութեան վերայ. Հանդէսը փակեց Արթ. Գարեգին վարդ. Եովսէփեան, տօնի նշանակութիւնը բացատրելով:

Հանդէսից յետոյ Վանքի սեղանատան հանդիսաւոր ծառ տրուեցաւ որի միջոցին Վեհ. Հայրապետի, ս. Էջմիածնի միաբանութեան եւն կենաց բաժակներ առաջարկուե-

ցան. խօսեցին Արթ. Սիոն վրդ., Բենիկ վրդ. եւն:

Երեկոյեան ծրագալոյց կար լի Վանքի եւ թէ ժեմարանի բակում ուր մեծ բազմութիւն էր ժողովուած զրօսակներ:

Հօկտ. 2-ին Վեհ. Հայրապետը բարեհաճեց այցելել Սաղմոսավանք տեանկու համար նորոգութիւնները՝ որ վերջացած էին եւ 6-ին վերադարձաւ ս. Էջմիածին:

Սինոդի հրամանով Բարձր. Եղիշէ եւ Կորիւն վարդապետները գնացին Դարաղաղեաղ՝ ու լծալ վանքի տօնին նուիրարեութեանց վերայ հսկելու եւ վերադարձան նախորդ տարիներից աւելի արդիւնք բերելով:

Տօների տոթիւ մի քանի օրով Մայր Աթոռ հիւր եկան եւ մեկնեցան Գեր. Մեսրոպ արքեպիսկ., Արթ. Բենիկ վարդ. նորընտիր տեսուչ Երեանի թեմ: զպլանոցին Արթ. Տիրայր վրդ. տեսուչ Ծուշուայ թեմ: զպլանոցին Արթ. Սիոն վրդ. փոխանորդ Հին Սալիշեանի եւն եւն:

Գեր. Ներսէս արքեպ. լուսավարական որ նշանակուել էր Բնասարարիոյ թեմի առաջնորդ, հոկտ. 3-ին մեկնեց Երեանից դէպի իւր նոր պաշտօնատեղին Ն. Բ. Սրբազնութեան բարի ելթ մատթելու համար Երեան էին գնացել միաբանակից եղբայրներից շատերը որոնք Երեանի պատուաւոր հասարակութեան բազմութիւ ներկայացուցիչների հետ ճանապարհ գրին մինչեւ քաղաքի ծայրը (մասնակցելով պ. Եղիազարեանի այգում ի պատիւ Սրբազանի արուած նախաձաշին), ումանք մինչեւ Բանաքեռ գիւղը: Սրբազանը ողջամբ հասել է իւր նոր պաշտօնատեղին եւ պատշաճաւոր ընդունելութիւն գտել:

Գեր. Սուրբիտտ արքեպ. Պարզեանց՝ նորընտիր հայրապետական փոխանորդ Երեանի թեմին: հոկտ. 31 ին գնաց իւր պաշտօնատեղին: Մի խումբ միաբանակիցներ մինչեւ Երեան ուղեկցեցին Նորին Բ. Սրբազնութեան: Սրբազանը նոյեմբ. 4-ին ուղեւորուել է Հին